

Արձանագրություն N 1-12/16

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2016 թ.-ի
դեկտեմբերի 23-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ.դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Հակոբյան Ռ.Ս., Հակոբյան Շ.Հ., Սայիյան Ռ.Գ., Բաղունց Գ. Ռ., Շահբազյան Ա.Վ., Պողոսյան Ա.Ա., Դավթյան Շ.Ա., Մնացականյան Հ.Գ. (ուսանող), Պետրոսյան Ա.Կ. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ):

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման» կարգի մասին.

2.Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կոռուպցիոն ռիսկերի վերլուծության և նվազեցման միջոցառումների մշակման հանձնաժողով ստեղծելու մասին.

3.Այլ հարցեր

Լսեցին 1-Գիտխորհրդի հաստատմանը ներկայացվեց «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման» կարգը:

Որոշեցին 1-Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման» կարգը:

Լսեցին 2- Հիմք ընդունելով Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռազմավարական ծրագրի պահանջները առաջարկվեց կոռուպցիոն ռիսկերի վերլուծության և նվազեցման միջոցառումների մշակման հանձնաժողով ստեղծել:

Որոշեցին 2.1- Ղեկավարվելով Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռազմավարական ծրագրի պահանջներով ստեղծել կոռուպցիոն ռիսկերի վերլուծության և նվազեցման միջոցառումների մշակման հանձնաժողով հետևյալ կազմով.

նախագահ՝

1.Հարությունյան Մհեր Ալեքսանդրի-պ.գ.թ., դոցենտ-հումանիտար և լեզուների ամբիոնի վարիչ
անդամներ՝

2. Պողոսյան Անահիդա Արտաշի-քաղաքաշինության, էներգետիկայի և ջրային համակարգերի ամբիոնի ավագ դասախոս
3. Հարությունյան Ռոբերտ Միսակի-տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտական առարկաների ամբիոնի վարիչ
4. Գրիգորյան Թամարա Գրիգորիի -գ.գ.թ, ուսումնամեթոդական բաժնի պետ
5. Հակոբյան Ռուզաննա Սեյրանի- ք.գ.թ., տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտական առարկաների ամբիոնի դասախոս
6. Գասպարյան Սուսաննա Պավելի-թարգմանիչ-խմբագիր
7. Զաքարյան Գևորգ Էդուարդի -ու. խորհրդի նախագահ
8. Մնացականյան Հայկ Գագիկի-ուսանող
9. Մնացականյան Էրիկ Կամոյի-ուսանող
10. Առաքելյան Արմանուշ Ալեքսանդրի-գիտ. քարտուղար (քարտուղար):

2.2-Հանձնարարել հանձնաժողովի նախագահ՝ Մ.Ա. Հարությունյանին տասնօրյա ժամկետում մշակել Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կոռուպցիոն ռիսկերի վերլուծության և նվազեցման միջոցառումների մշակման կարգ և այն ներկայացնել գիտխորհրդի քննարկմանը:

Լսեցին 3-Գիտխորհրդի հաստատմանը ներկայացվեց «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» և «Հեռահաղորդակցություն» մասնագիտությունների IV կուրսերի ավարտական աշխատաքների թեմաները:

Որոշեցին 3-Հաստատել «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» և «Հեռահաղորդակցություն» մասնագիտությունների IV կուրսերի ավարտական աշխատաքների թեմաները:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թորմաջյան
Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան